## ԹԵՀՄԻՆԵ ՄԱՐՏՈՅԱՆ

# ԿԱՐՄԵԼՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄՆ ԻՐԱՆ

Կարմելյան միաբանությունն ստեղծվել է 12-րդ դարի երկրորդ կեսին, իսկ 13-րդ դարի սկզբին իր գործունեությունը տեղափոխել Եվրոպա[1]:

Բարտոլդ քահանան և իր տաս համախոհները հայտարարվեցին ճգնավորներ՝ հաստատվելով Կարմել լեռան վրա գտնվող Էլիասի (Էլիջահ) անունը կրող քարայրին կից: Կարմելյաններն իրենց համապում էին Էլիասից սերված՝ վերջինիս բնութագրելով որպես «կրակ, որի խոսքն այրվում էր ինչպես կերոն»[2]:

Հաշվի առնելով կրոնավորների վանական կյանքի համար փորձ չունենալու փաստը՝ Երուսաղեմի սուրբ Ալբերտ հայրապետը (1206-1214թթ.), որն ապրում էր Աքրայում, 16 հոդվածից բաղկացած կանոնադրություն տվեց, որն, իրավամբ, համարվում էր միաբանների կյանքի ուղենիշը՝ առանձնանալով իր պահանջների յուրահատկությամբ (օրինակ՝ յուրաքանչյուր ճգնավոր պետք է բնակվեր իր սեփական քարայրում, կային որոշ սահմանափակումներ սննդի օգտագործման մեջ (ապագելված էր մսի գործածությունը), կանոնակարգված էր պաս պահելը, չպետք է մոռանային, որ կյանքն անցողիկ է և այլն)[3]: Իրենց կանոնադրության համաձայն Կարմելյանները պետք է ապրեին միմիայն նվիրատվություններից հավաքված գումարներով, որն, ինչ խոսք, ապացուցում էր, որ նրանք պատկանում են մուրացիկ միաբանությանը, սակայն, հետագայում, խեղաթյուրելով իր իրական դեմքը, միաբանությունն անանախադեպ կերպով և ոչ բնականորեն հարստանում է՝ արժանանալով կաթոլիկ եկեղեցու հակառակորդների պարսավանքին և քննադատությանը[4]:

Այսօրինակ դրսևորումների հետևանքով 16-րդ դարի վերջին միաբանության շարքերը լքում են նույնիսկ նախկին վարչակարգի կողմնակիցները՝ պատմության մեջ մնալով որպես «բոկոտն» (Discalced) Կարմելյաններ՝ խորհրդանշելով չքավորությունը:

Փաստորեն, տրոհվում է այսպես կոչված «Les Grands Carmes»-ն՝ վերամիավորվելով միայն 1876թ. [5]:

Հատկանշական է, որ դեռևս XI դարի սկզբին տեղի ունեցած այսպես կոչված «պապական հեղափոխությամբ» տարաբաժանվեցին աշխարհիկ և եկեղեցական իշխանություններ[6]: Հռոմի պապական եկեղեցին, տիրանալով Արևմուտքին, վճռել էր իր քաղաքական ձգտումներին հագուստ տալ նաև Արևելքում՝ որդեգրելով «խաղաղ» ճանապարհով ներթափանցելու մանրագնին մշակված ծրագիր: Այս առնչությամբ Ս. Գ. Լյոզինսկին գրում է. «Կրոնական շղարշով ծպտված պապության քաղաքական նպատակները միշտ էլ հանդիսացել են իրենց գործունեության հիմնական լծակը»[7]:

Սրանից հետևում են մի շարք եզրակացություններ՝ Իրանը նպատակահարմար էր ոչ միայն որպես Հնդկաստան տանող առևտրական ճանապարհների վրա ընկած և հումք մատակարարող երկիր, այլև հանդիսանում էր ռազմական և քաղաքական գործոն՝ դիմագրավելու համար Եվրոպային սպառնացող վտանգը[8]:

Դժվար չէ նկատել, որ Կարմելյան, ինչպես նաև եվրոպական այլևայլ կաթոլիկ միաբաններ բավականին խելամիտ էին՝ բաց չթողնելու համար իրենց բազմաբնույթ շահերի իրականացումն ապահովող նման բարեպատեհ առիթը: Պապերն, իրենց հերթին, բավականին զգոն էին և գիտակից իրենց գործելակերպը փոփոխելու մեջ՝ կապված Եվրոպայում ընթացող սոցիալ- քաղաքական հարաբերությունների հետ: Վատիկանի քաղաքական գործունեությունն անվանելով հակաժողովրդական և իր հետադեմ նպատակների իրականացմանն ուղղված գործելակերպ, պապությանն անդրադարձած իր մի շարք աշխատություններից մեկում Շեյնմանը նկատում է Վատիկանի որդեգրած քաղաքականության բազմաբնույթ դրսևորումները, որոնց շնորհիվ հնարավոր է դառնում ժողովրդական լայն զանգվածների մեջ ներխուժումը՝ տարաբնույթ ձևերով ազդելով նրանց վրա և տարածելով իր հետադեմ քարոզչությունը[9]:

Շեյնմանը միևնույն ժամանակ գտնում է, որ կրոնական, մասնավորապես կաթոլիկ կազմակերպությունները հանդիսացել են «անսխալական» պապերի գաղութարարական քաղաքականության զենքը:

Ավելորդ չէ նշել, որ քարոզիչները, համաձայն իրենց գործելակերպի, նախապես ուսումնասիրում էին նպատակակետ ընտրված երկրի քաղաքական կարգը, տնտեսական դրությունը, կենցաղը, մշակույթը և Իրանի վերաբերյալ այդ տեղեկատվությունն օգտագործում ի նպաստ իրենց առաքելության[10]:

«Պապությունն, ըստ էության, չուներ իր նախկին հզորությունը, ինչպիսին ներկայանում էր 13-րդ դարում»,- իրավացիորեն նշում է պրոֆեսոր Ս. Արխանգելսկին,- «սակայն կաթոլիկության հետադիմությունը 16-րդ դարի կեսին և 17-րդ դարում մասամբ ամրապնդեց պապական դիրքը»[11]:

Այս ամենը հիմք է տալիս ենթադրելու, որ տվյալ դեպքում, ըստ հակիրճ նկարագրի, միաբանությունը դարձավ պապության քաղաքական նպատակների զենքը:

Հաշվի առնելով եվրոպական արդյունաբերության համար հումքի աղբյուր հանդիսացող երկրի նպատակահարմարությունը և այն հանգամանքը, որ ձգտում էին տիրանալ իրանական շուկային և միաժամանակ օգտագործել Իրանը որպես «ընդհանուր թշնամու» դեմ պայքարի լավագույն դաշնակցի, իրականացրեցին կաթոլիկ միաբանների ներթափանցումն Իրան:

Պապի կարգադրությամբ միաբաններն ամբողջ աշխարհում պետք է կուսանոցներ հիմնեին, որն իրականացվեց ոչ միայն Մերձավոր Արևելքում, Իրաքում, Հնդկաստանում, այլև՝ Չինաստանում և Ամերիկայում:

Հարևաններին «մաքրագործելու» և «անհավատների» սրտերը շահելու նպատակով միաբաններն ի սպաս դրեցին հավատի, բարեպաշտության և սուրբ կյանքի վերաբերյալ իրենց գիտելիքները: Կարմելյանների անչափ բարության և վարվելակերպի գերազանց դրսևորումների մասին հիշատակում է Շլեզվիգ-Հոլշտայն պետության դեսպանության քարտուղար Ադամ Օլեարիուսն Իրան կատարած ճանապարհորդության ժամանակ[12]: Սա զարմանք չի առաջացնի այն պարզ պատճառով, որ Կարմելյանների գործունեության հաջողության գաղտնիքը թաքնված էր նրանց «օձը բնից հանող» քաղցր լեզվի մեջ, որով, փաստորեն, կարողանում էին շարժել «անհավատների» սրտերը:

Այսպես, Կարմելյան հայրերի առաքելությունն Իրան իրականացվեց Հռոմի Պապ Կլեմենտ VIII-ի[13] նախաձեռնությամբ և աջակցությամբ:

«Իմամների ինքնակալ շառավիղները, զինելով իրենց բռունցքը, նվաճեցին Պարսկաստանի բաժան-բաժան մասերը, հիմնեցին իրենց թագավորությունը»,- այսպես է բնութագրում Լեռն Սասանյան հարստության անկումից ինը հարյուր տարի անց վերոհիշյալ հարստության սահմանների մեջ հարություն առած Սեֆյան արքայատոհմը[14]:

Սեֆյան շահ Աբբաս Առաջինի գահակալության տարիներն առանձնանում են նրանով, որ հենց նրա օրոք Կարմելյան միաբանության առաջին առաջնորդ Պոլ Սայմընը և իր ուղեկիցները, ժամանելով Իրան, հաստատվեցին Սպահանում 1607 թ. վերջին[15]: Շահ, որի քաջության մասին լուրը որպես հաջողակ պատերազմողի, հասել էր Հռոմ: Նմանօրինակ վերաբերմունքի դրսևորում է նաև հետևյալ հիշատակումը. «Սայ յոյժ խոհեմ ի գործս թագաւորութեան և յաղթող ի պատերազմի»[16]:

Դեռևս 1592թ. սեպտեմբերի 30-ին Կլեմենտ Պապը շահին հրավիրել էր միանալու քրիստոնյաների լիգային ընդդեմ թուրքական սուլթանի: Այս իրադեպի հետաքրքիր լրացում է նաև նրա գրառումը, որտեղ Պապը սարսափելիորեն մերկացնում և պարսավում է թուրքերի բռնակալին՝

անվանելով նրան «... սարդ՝ բոլորից սմենահիմարը, որքան մեր, նույնքան ձեր և բոլոր լսվ մարդկանց թշնամին»:

«Հաղթանակն անխուսափելի կլինի,- գրում է Պապը, եթե ամենակարող Աստված պատժի այդ երիտասարդին իր գործած մեղքերի համար. և որ բոլոր կողմերից հսկայական բանակներ գրոհեն այդ հրեշի վրա[17]»:

Այսուհանդերձ, պետք էր նկատի ունենալ, որ Թուրքիան, ինչպես իրավամբ նշում է Վ. Բայբուրդյանը, տակավին XVI դարի սկզբին ձեռք բերելով լուրջ հաղթանակներ և նվաճելով հսկայական տարածքներ, վերածվել էր ածվել Մերձավոր Արևելքի խոշորագույն պետության և արևմտյան քրիստոնյաների համար վտանգ էր ներկայացնում[18]:

1607թ. անգլիական դեսպան Հենրի Լելլոն, վերադառնալով հայրենիք, այն միտքն է զարգացնում, որ «Թուրքիան անկում է սպրում և արևմտաեվրոպական երկրներին դժվար չի լինի վճռական հաղթանակ տանել»[19]:

Դեռևս 1939թ. Լյոնդոնում հրատարակված անանուն հեղինակի երկու հատորանոց ստվարածավալ և արժեքավոր աշխատության մեջ եվրոպական միապետների և, մասնավորապես, Հռոմի պապերի և պարսից շահերի միջև բազմաբնույթ նամակներից մեկն իրազեկում է շահ Աբբասի քրիստոնյաների նկատմամբ բարյացկամ վերաբերմունքի մասին. «Կլեմենտ Պապից պարսից ամենազոր և մեծանուն թագավորին: Թեպետ երբևիցե չենք տեսել, այնուհանդերձ, բազմիցս լսել ենք ձեր հերոսության, արքայավայել մեծահոգության և Աստծու շռայլած բազում շնորհների, այդ թվում՝ քրիստոնյաների նկատմամբ ձեր բարյացկամության և հարգանքի, ինչպես նաև ձեր թագավորությունում եկեղեցիներ կառուցելու և քահանաներ փնտրելու մասին[20]»:

Սկզբունքորեն կարևոր նշանակություն է ձեռք բերում այն հանգամանքը, որ թուրքերի դեմ դաշինք առաջարկելով Պապին և եվրոպական կաթոլիկ պետություններին՝ շահ Աբբասն, իր հերթին, պատրաստակամություն էր հայտնում «եվրոպական առևտրականների ու քարոզիչների առջև բացելու Իրանի հյուրընկալ դռները՝ հատկացնելով նրանց ամեն տեսակի պաշտպանություն, առանց որևէ խտրության նրանց և տեղացիների միջև»[21]:

Շահի այսօրինակ դրսևորումներից է նաև Ռաֆայել դյու Մանի դը Կոլբերին գրած նամակը, որում դյու Մանը հետևյալ կերպ է զարգացնում իր միտքը.«... Պարսկաստանն իրեն ճանաչել է տալիս օտարերկրացիների մոտ՝ շնորհիվ նրանց նկատմամբ Շահ Աբբաս Առաջինի լավ վերաբերմունքի. նա ամեն գնով ուզում էր ֆրանկների հետ դաշնակցել և դա էլ պատճառ եղավ, որպեսզի Պապի նամակներով իտալացի սուրբ Կարմելիտ հայրերը ժամանեն այստեղ՝ որպես միսիոներներ բնակվելու համար»[22]:

Այս առումով բավականին հետաքրքիր գրառում է թողել նաև Ավգուստինյան քարոզիչ Անտոնիա դե Գուվեան. «Բոլոր քրիստոնյա իշխանությունների մոտ դեսպանություններ ուղարկեց՝ նրանց միացնելու ու թուրքերի դեմ համատեղ պատերազմ սանձահարելու համար այն հաշվով, որ վերջինները զբաղված լինեն երկու կողմից՝ Եվրոպայից ու Ասիայից և այդ միջոցով նա կարողանա վրեժ լուծել իրենց հասցված վիրավորանքների համար և վերանվաճել այն քաղաքներն ու ամրոցները, որոնք կորցրել էին իրենց նախնիները»[23]:

Հասնելով որոշակի օգնության բանակի վերակազմավորման հարցում և ձգտելով Եվրոպայի հետ հետագա հարաբերությունների հաստատմանը՝ Աբբաս Առաջինը 1599թ. հայտարարեց Իրանում քրիստոնեության դավանման ազատության մասին և դիմեց Կլեմենտ VIII Պապին Իրան մշտական դեսպանություն ուղարկելու խնդրանքով: Սա, թերևս, մեծ ոգևորություն առաջացրեց Պապի մոտ, որի իրական առհավատչյան 1604թ. Սպահան ուղարկված բոկոտն Կարմելյանների քահանաներից կազմված խումբն էր:

Ենթադրվում էր, որ Կարմելյանները Եվրոպա կվերադառնային շահ Աբբասի մահից հետո, որի մասին խոսվում է Հռոմից 1631թ. հղված զեկուցագրում, մինչդեռ, Արևելքում նրանց մնալը բավականին երկար ձգվեց[24]:

Հռոմ ուղարկած հայր Պոլ Սայմընի զեկուցագրից տեղեկանում ենք. «Ձերդ Սրբության ձեռքերում է ներկայումս բարեկամական հարաբերություններ հաստատել պարսից շահի հետ կամ ջարդել նրանց...Այն ամենն, ինչ կարող եմ տեղեկացնել, այն է, որ պարսից թագավորը շատ հզոր է. այլևս ոչ մի կարիք չկա, որ քրիստոնյա արքաներն օգնեն նրան, որովհետև նրա բանակն այնքան մեծ է, որ ի զորու է միայնակ կործանել թուրքերին, քանզի նրա զինվորն ունի հազվադեպ կարողություն և բացառիկ շրջահայացություն»[25]:

Դեռևս 1597թ. Էջմիածնի նվիրակ Հակոբ Համդեցի քահանան, ժամանելով Վենետիկ, գրություններ է հանձնում Հռոմի Պապին և գերմանական կայսրի դեսպանին: Վենետիկի դուքսին նրա տված բացատրությունից տեղեկանում ենք, որ շահ Աբբասը (ինչպես նաև՝ վրաց թագավորը) խնդրում է Պապին աղոթել, որ ի վիճակի լինեն Թուրքիայի դեմ դուրս գալ, որպեսզի արևելյան քրիստոնյաների վիճակը թեթևացնելու համար միասնական հաղթանակ տանեն «ընդհանուր թշնամու դեմ»[26]:

«Լուսին կրօնաւորներ սկսած էին ցրուիլ զանազան գաւառներ, թե մարդ որսալու և թէ անտէր ստացուածներ գտնելու...»,- գրում է Մ. Օրմանյանը: Նա միաժամանակ գտնում է, որ միաբանները «Արեւելեան եկեղեցիներուն տրուած հերձուածողի և հերետիկոսի կոչումներով ականջին լեցած, միտքերը պղտորող զրոյցներով միամիտները կ'որսային»[27]:

Նույն ժամանակահատվածում Իրանում տեղակայված էին նաև Ավգուստինյան, Կապուչինյան, Հիսուսյան միաբանները: Կուսմելյանները և Կապուչինյանները իրենց գործունեությունն իրականացնում էին Սպահանում, Բենդեր-Աբբասում, Շիրազում, Թավրիզում:

Ավգուստինյանները կենտրոնացել էին Սպահանում, Դոմինիկյաններ՝ Նախիջևանում[28]:

Դժվար չէ նկատել, որ շուտով Աբբաս Մեծը փոխում է իր նախկին բարյացկամ վերաբերմունքը միաբանների նկատմամբ՝ կապված Գերմանիայի կայսր Ռուդոլֆ Երկրորդի օսմանյան սուլթանի հետ կնքած դաշինքի հետ[29]:

Հարկ ենք համարում շեշտել, որ շահը ջանք չէր խնայում խորապես ուսումնասիրելու Կարմելյանների առաքելության իրական պատճառը:

Այս կապակցությամբ Պոլ Սայմընը հիշատակում է. «Շահը մի անգլիացու միջոցով հետաքրքրվում է մեր առաքելության բուն նպատակով: Նրան հատկապես հուզում է հայերի միավորման հարցը: Բայց երբ պատասխանը հնչում է, որ դրա համար չենք եկել, այլ՝ որոշ գործերով, շահը խոստանում է, որ շուտով կհրավիրի մեզ ունկնդրության»: Վերջիններիս խորհուրդ է տրվում հայերի հետ կապված ոչինչ չքննարկել, քանի որ շահի դույզն-ինչ գայրույթն անգամ ամեն ինչ կարող էր փչացնել[30]:

Շահի հետ երկար սպասված հանդիպումն իրականացավ 1608թ. հունվարի 3-ին, ճաշից հետո: Հյուրերը ջերմ ողջույններ և թանկարժեք նվերներ շուայլեցին շահին:

Պետք է հիշատակել նաև մի հետաքրքիր իրադեպ, երբ շահը պատահաբար բացում է Հին Կտակարանի այն էջը, որտեղ պատկերված էր Սուրբ Միքայել հրեշտակապետը՝ թուրը ձեռքին, և ոտքերի առջև տապալված վիշապը: Այն հարցին, թե ի՞նչ է խորհրդանշում վիշապը, հնչում է պատասխանը. «Դա սատանան է»: «Ո՛չ», - ժխտում է շահը՝ ծիծաղելով և իր ուսի վրայից հայացք նետելով այդ երեկո ներկա գտնվող թուրք փաշաներին,- «Դա թուրքն է՝ սուլթանը»[31]:

Թուրքիայի դեմ պատերազմում համագործակցության հետ կապված ցայտուն օրինակներից է շահ Աբբասի նամակը՝ հասցեագրված Հռոմի Պապին. «Ինքնիշխան Պապը խոստացել է օգնել թուրքի դեմ պատերազմում: Եթե պահպանի իր խոստումը, ամենարնչուրելի բանը կլինի, չնայած որ ես պատրաստ եմ պատերազմական գործողություններ սկսել ըստ իմ հարմարության...Ձեզ մոտ եմ ուղարկում իմ շատ սիրելի և երկար տարիների հավատարիմ ծառային՝ Ռ. Շըրլիին, որպես արտակարգ դեսպան... Ինչ վերաբերում է իմ երկրի քրիստոնյաներին, ապա ես չեմ թեյանա մարդասիրություն և հովանավորություն ցուցաբերելու հարցում»: Մեկ այլ նամակում կրկին արծարծվում է վերոհիշյալ թեման, առաջարկելով՝ կամ կործանել, կամ հնազանդեցնել «ընդհանուր թշնամուն». «Ապագայում ես ոչ միայն այս ամենագարշելի ժողովրդի ախո-

յանն ու անվտխարինելի թշնամին կլինեմ, այլև՝ ամենաղաժան դահիճն ու կործանարարը»,- գրում է շահ Աբբասը[32]:

Պետք է փաստել նաև, որ Աբբաս Մեծը հրամայել էր Հայր Պոլ Սայմընին հեռանալ որքան հնարավոր է շուտ. իսկ նրա երկու ուղեկիցներին թույլատրել էր մնալ Սպահանում: Պոլ Սայմընը, դուրս գալով Սպահանից. անհրաժեշտություն էր համարել իր ընկերակիցներին գրավոր ուղղություններ թողնել՝ կարևորելով այն հանգամանքը, որ վերջիններս փորձեն շահից ձեռք բերել Կարմելյաննիրի գործերին չմիջամտելու ստորագրված ե կնքված մի հրաման, բացի այդ, նրանք պետք է լիազորված լինեին երկրում ազատորեն շրջելու, ինչպես նաև պարբերաբար զեկուցագրեր հղեին Հռոմ: Պարսից շահը, հետամուտ լինելով իր խոստումներին, մեծահոգաբար, արքայական կալվածքին պատկանող մի ընդարձակ և հարմարավետ շինություն տրամադրեց Սպահանում տեղակայված Կարմելյան սուրբ հայրերին[33]:

Ռոբերտ Շըրլին հարկ է համարում Կլեմենտ VIII-ի հաջորդին՝ Պոլ V-ին իրազեկել շահի հետ համագործակցելու անհրաժեշտության մասին. «Երկար տարիներ աշխատելով պարսից շահի մոտ՝ ես, եղբայրս և ուրիշ կաթոլիկ քրիստոնյաներ տարբեր ապացույցներ վկայակոչելով՝ առաջ ենք քաշել քրիստոնյա արքաների հետ բարեկամության և համագործակցության կարևորագույն գաղափարը: Այն հարցին. թե որքանով արդյունավետ կլինի այս միությունը, համոզմունք ենք հայտնել, որ, անտարակելիորեն, խոստումնալից կլինի: Իսկ ինչ վերաբերում է քրիստոնեությանը, ապա պարսից շահը բնությունից մեղմ է և շատ բարյացկամ քրիստոնյաների նկատմամբ, մասնավորապես այն բանից հետո, երբ կնության առավ վրաց թագավորներից մեկի՝ Սիմոն խանի դստերը»[34]:

Հատկանշական է, որ բացի վերոշարադրյալ փաստերից, արքունիքում շատ քրիստոնյաներ ևս տարբեր պաշտոններ էին զբաղեցնում, մասնավորապես՝ բանակում: Այս ամենը հիմք է տալիս ենթադրելու, որ շահի «քրիստոնյամետ» և հատկապես հակաթուրքական դիրքորոշումը պայմանավորված էր նաև Ալիի այն խոսքերով, թե «քրիստոնյաների բարությունը կարեկցությունից կուլս է, իսկ թուրքերի հավատքը՝ ամբողջովին ընդհակառակը»[35]:

Հաստատվելով Իրանում՝ Կարմելյանները եռանդուն կերպով սկսեցին յուրացնել պարսկերեն լեզուն, ուսումնասիրել Ղուրանը:

Հեռատես հայր Ջ. Թադդեուսն այնքան էլ միամիտ չէր իրենց բուն նպատակի իրականացման հավաստիության հարցում այն պարզ պատճառով, որ, ինչպես ինքն է դիպուկ նկատում, «ամբողջ սրտով մահմեդական շահը» հազիվ թե զոհողությունների գնար: Ընդհակառակը, նա ինքն էր փորձում քրիստոնյա հայերին, ֆրանկներին և տարբեր ժողովուրդների մահմեդականացնել: Այս կապակցությամբ, չվարանելով նույնիսկ թուրքերին գերադասել պարսիկներից, Ջ. Թադդեուսը գրում է. «Սովորու-

բար նրանք քրիստոնյաների հետ սեղան չեն նստում, ավելին, եթե պատահաբար որևէ քրիստոնյա դիպչի պարսիկի զգեստին, ապա վերջինս իրեն կհամարի կեղտոտված ե կգնա լոգարան՝ «մաքրվելու»: Պարսիկները հավասարապես չեն սիրում իտալացիներին, գերմանացիներին, իսպանացիներին՝ անվանելով նրանց «ֆրանկ»»[36]:

Հարկ ենք համարում ընդգծել, որ պարսից շահը բավականին խելամիտ էր հասկանալու համար, որ քրիստոնյա թագավորներն ու Պապը ցանկանում են «ուրիշի ձեռքով կրակից շագանակ հանել» և որ չափազանց պասիվ են պատերազմելու համար, որն, ըստ ամենայնի, սուր ծայրով կարող էր ուղղվել «իր տաքուկ գրկում հայտնված» Կարմելյանների դեմ, ուստի հայր Ջ. Թադդեուսը, ժամանակին ըմբռնելով իրավիճակի լրջությունը ե շահի զայրույթը մեղմելու նպատակով փորձում է մեղքը գցել Պապի վրա՝ հույս հայտնելով, որ վերջինս շուտով կբավարարի իր պահանջները:

Սակայն շահն այդ «ոչ հիմնավոր» պատճառաբանությունները որակեց որպես «սին ու կեղծ խոսքեր»:

Այսօրինակ դրսևորումների վկայություններից է նրա բավականին խիստ զգուշացումը. «Արդեն ժամանակն է թուրքերի դեմ պատերազմի և եթե մոտակա չորս ամսվա ընթացքում քրիստոնյաները զորքեր դուրս չբերեն թուրքերի դեմ, ապա ես կխզեմ կապն այն ընկերների հետ, ովքեր ստում են և լոկ բառեր են ասում»[37]:

1615թ. սեպտեմբերին տրված Աբբաս Առաջինի ֆարմաններից (հրաման) մեկը վերաբերում է Կարմելյան հայրերի տեղակայմանն Իրանում: Այս ֆարմանում հիշատակվում է, որ հարգարժան Ջուսեն և Ռեդեմպտոն հայրերը ազատ են հաստատվելու իրենց նախընտրած վայրում՝ միաժամանակ խոստանալով նրանց պատիվ և հարգանք[38]:

Այսպիսով, ուսումնասիրելով շահ Աբբասի իրարամերժ քաղաքականության յուրահատկությունները, գալիս ենք այն համոզման, որ նա պատրաստ էր գործել այնպես, ինչպես իր երկրի շահերն էին պահանջում և հանուն երկրի բարօրության «միջոցների մեջ խտրություն չէր դնում նպատակին հասնելու ճանապարհին»:

Իտալացի կրոնավոր Դիմասը բավականին դիպուկ բնորոշում է տալիս. «Շահ Աբբասը կամ ամենախորամանկ մարդն է աշխարհում, կամ մի մարդ է, որին Աստված նախասահմանել է քրիստոնյա դառնալ»: Այս պարագայում իր յուրօրինակ հնչեղությունն է արտահայտում ոչ պակաս կարևորություն ներկայացնող ևս մի օրինակ, որ հիշատակում ենք ստորև:

«Շահ Աբբասի կողմից նախաճաշի հրավիրված Կարմելյան հայր Ջ. Թադդեուսը, ներկայացնելով պարսկերեն թարգմանված Սաղմոսների գիրքը, նկատում է, թե ինչպիսի նվիրվածությամբ է շահը համբուրում այն. ապա դնում իր գլխին և այնուհետև հրամայում պահել պահարան-

նում՝ ավելացնելով. «Ով որ չի հավատում Սաղմոսների գրքին և Ավետարանին, անհավատ է»: Տեղին է նշել, որ վերջինս այս միտքը կրկնել է նաև մեկ այլ առիթով՝ խոջա Սաֆարի տանը, երեք կաթոլիկ քարոզիչների ներկայությամբ[40]:

Շահ Աբբասի Կարմելյան ներկայացուցիչների նկատմամբ վերաբերմունքի փոփոխությանը հանդիպում ենք կրոնավորների 1621թ. սեպտեմբերի 8-ին Հռոմ հղած մի նամակում. «Մենք ամենամեծ բռնակալի երկրում ենք, որ եկեղեցին երբևէ ունեցել է մինչ օրս: Մեթոդները վերցված են դժոխքից: Մեր ժամանումից ի վեր ստրկացվել է 39 գյուղ, քրիստոնյա կանանց բռնությամբ կնության են տվել մահմեդականներին և հակառակը...»[40]:

1622թ. գարնանը քարոզիչները կանգնեցին լուրջ սպառնալիքի առաջ. շահն անլուր հալածանքների էր ենթարկել Կարմելյանների կողմից մկրտվածներին:

Թեպետ բավականին դժվարացել էր Կարմելյանների վիճակը, այնուհանդերձ, այս պայմաններում ևս նրանք չէին դադարեցնում «ճշմարիտ կրոնի» լույսի սփռումն անհավատների վրա:

Զարմանալի չի թվա, եթե նշենք, որ մեզ հասած տեղեկությունների համաձայն, Կարմելյանները որոշակի հաջողություններ ձեռք բերեցին 1624-1625թթ. Բասրայում: Ակնկալվող հաջողություններ էին սպասվում նաև Շիրազում այն պարզ պատճառով, որ խանն ինքն էր ակնարկել այնտեղ Կարմելյանների հաստատման բուռն ցանկության մասին: Նախատեսվում էր ներթափանցել նաև Լուրիստան:[41]

Այսպիսով, ներթափանցելով Իրան, Կարմելյան հայրերը՝ «զամենայն հեթանոս աշակերտելու» քրիստոնավանդ պատգամով և նախանձախնդրությամբ, կանգ չէին առնում վերոբերյալ լուրջ խնդիրների առջև՝ հավատարիմ Քրիստոսի՝ իր առաքյալներին հանձնած վերջին պատգամի. «Գնացէ՛ք այսուհետեւ, աշակերտեցէ՛ք զամենայն հեթանոսս»[42]:

Ընդհանրացնելով վերը շարադրվածը՝ հարկ ենք համարում շեշտել, որ Իրանի հետ քաղաքական և տնտեսական մերձեցման, Թուրքիայի դեմ տարածաշրջանում հզոր դաշնակից ձեռք բերելու հեռանկարով իրականացվեց Կարմելիտն միաբանների ներթափանցումն Իրան: Երկիր, որն իր ներքաղաքական հարցերի կարգավորման, ինչպես նաև տնտեսական լայն հնարավորություններ ստեղծող եվրոպական շուկա ելք ունենալու համար հակված էր Հռոմի հետ ամենաակտիվ վտխշփումների:

Հռոմի և Իրանի միմյանց չզիջող դիվանագիտական մանևրումներն ըմբռնելու համար հարկավոր չէ շատ հեռանալ: Կրոնաբարեգալծական շղարշի ներքո հայտնված Կարմելյաններին գրկաբաց ընդունելով իր երկրում՝ շահը գիտակցում էր, թե երբ պետք է կանգ առնել: Այս առումով հետաքրքրական է այն հանգամանքը, որ փորձելով օգտագործել կաթո-

յիկ միաբանների ներթափանցումն Իրան, շահը, միաժամանակ, հասկանում էր, որ հարկավոր է ապավինել միմիայն իր ուժերին:

Այսպիսով, «անհավատներին», այլադավաններին դարձի բերելու, մաքրագործելու դիմակով հայտնված Կարմելյան միաբանները, որոնք, ի դեպ, հայտնի են ոչ միայն «ճերմակ վանականներ», «Էլիասի բոկոտն Կարմելյաններ», այլև «իտալական միաբաններ» անվամբ՝ հովանավորված և ուղարկված հատուկ հանձնարարականով, կարողացան ներթափանցել և հաստատվել Իրանում:

TEHMINE MARTOYAN

## THE PENETRATION OF THE ORDER OF CARMELITES INTO IRAN

It was asscrted that Elias (Elijah) established a community of hermits on Mount Carmel.

The historical origin of thc Carmelites must be placed at the middle of the 12-th century, when a crusader named Berthold, and his ten companions established themselves hermits ncar the cave of Elias on Mount Carmel. About 1210 hermits on Carmel received from Latin patriarch of Erusalem, a rule comprising 16 articles.

The Discalced Carmelites spread all over Catholic Europe, then to East, especially Iran and India. Pope Clement VIII found nccessary and desirable to send his own representatives to Iran.

So, Congregation took up missionary work among the infidels. Thus, the Popes were eager to realize their political purposes, for instance, uniting forees against "the common enemy"-Turkey.

The shah also offered his friendship and goodwill to all Christian princes against the turks. On 30. 09. 1592 Pope Clement VIII wrote a brief dealing the vary leage against sultan.

The departure of the first Carmelites from Rome was in 1604. The latters arrived in Persia at the end of 1607.

It is clear, that the the departure of the Carmelites was dictated with political purposes of the Catholic Rome. But the shah was very clever to understand the profits of his country.

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տե՛ս Encyclopaedia Britannica, v. IV, Chicago, London, Toronto, 1961, p.888, The Cambridge Medieval history, v. VI, Cambridge, 1936, p.757,
دکتر مر یم میرلحمدی،دین و دولت در عصر صفوی،تهران،۱۳۶۹،ص. ۱۰۳ - ۱۰۳.
2. Տե՛ս Charles L. Souvay, The Catholic Encyclopedia, v.V, http://www.newadvent.org/cathen/05381b.htm
3. Տե՛ս The Carmelite Order, The Catholic Encyclopedia, v.III, http://www.newadvent.org/cathen/03354a. htm, P. I. Moriones, Theresian Carmel, Pages of history, Rome, 1978, p. 2, http://www.ocd.pen.net/histo-I.htm

4. Տե՛ս Семенова Л. А., Орден кармелитов как орудие проникновения европейцев в Иран, М., 1962, с.94, Տես նաև՝ ۱۰۴ .ص،صفوی عصر در دولت و
دکتر مر یم میرلحمدی،دین

5. A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVII-XVIII centuries, London, 1939, v.I, p.8 (այսուհետև՝ "A Chronicle of the Carmelites"). Семенова Л. А., նշվ. աշխ., էջ 94:

6. Տե՛ս Зонова Т. В., Дипломатическая служба Италии, Дипломатия иностранных государств, М. 2004, с.103.

7. Лозинский С. Г., История Папства, М.,1986, с. 40., Тер-Аветисян С. В., Город Джуга, материалы по истории торговых сношений джульфинских купцов XV-XVII вв., Тбилиси, 1937, с.2.

8. Տե՛ս Բայբուրդյան Վ. Ա., Նոր Ջուղայի հայկական գաղութը և կաթոլիկ միսիոներների կազմակերպությունները, ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1964, N9, էջ 39, Տե՛ս նաև՝ Բայբուրդյան Ա. Վ., XVII դ. Արևելյան Հայաստանում կաթոլիկ միսիոներների գործունեության պատմությունից, ՊԲՀ, Ե.,1989, 1(124), էջ 148, Байбуртян В. А., Армянская колония Новой Джульфы в XVII веке, Е., 1969, с.121.

9. Տե՛ս Шейнман М. М., Ватикан и католицизм на службе международной реакции, М., 1954, с.14.

10. Տե՛ս Шейнман М. М., Краткие очерки истории папства, М., 1952, с. 29-30, Шейнман М.М., Папство, М. 1961, с. 39-40, 47, Байбуртян В. А., Армянская колония Новой Джульфы в XVII веке, с.121-122.

11. Архангельский С., Отношения Англии с протестантской и католической Европой(1654-1658), "Вопросы Истории", N1, М., 1946, с. 114.

12. Տե՛ս "A Chronicle of the Carmelites", p. 10, Adam Olearius, The travels of Olearius in seventeenth-century Persia. http://depts.washington.edu/uwch/silkroad/texts/olearius/travels.html

13. Կլեմենտ VIII Պապը (Ippolito Aldobrandini) ծնվել է 1536թ. մարտին, Ֆանոյում(Ֆլորենցիա), պապական իշխանության անցել 1592թ. հունվարի 30-ին: Սահացել է 1605թ. մարտի 5-ին, Հռոմում:

14. Լեո, Երկերի ժողովածու, հ. III, գիրք I, Ե., 1969, էջ 45, 171, Сайид Али Муджани, Иран, Тегеран, 2002, с.78, ۳۰۸ - ۳۰۷ .ص،جلد سوم،۱۳۷۳،تهران،ایران ساله
عبدالعظیم رضائی،تاریخ ده هزار

15. Տե՛ս "A Chronicle of the Carmelites", p.66.

16. Հակոբյան Վ. Ա., Սևանի ժամանակագրություններ XIII- XVIII դդ., հ. II, Ե., 1956, էջ 428:

17. "A Chronicle of the Carmelites", p.69.

18. Տե՛ս Բայբուրդյան Վ. Ա., Թուրք-իրանական հարաբերությունները (1900-1914թթ.),Ե.,1974, էջ 5:

19. Черняк Е. Б., Вековые конфликты, М. 1988, с.18, Տե՛ս նաև՝ Байбуртян В. А., Армянская колония Новой Джульфы в XVII веке, с. 9.

20. "A Chronicle of the Carmelites", p.84-85.

21. Հովհաննիսյան Ա.,Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք II, Ե.,1959,էջ 112:

22. Զուլալյան Մ. Կ. Հայ ժողովրդի XIII-XVIII դդ. պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների. գիրք Ա, Ե., 1990, էջ 294-295:
23. Քաղվածքը՝ նույն տեղում, էջ 135:
24. Տե՛ս "A Chronicle of the Carmelites", p.66, 107.
25. Նույն տեղում, էջ 98:
26. Տե՛ս Հովհաննիսյան Ա., նշվ. աշխ., էջ 78:
27. Մեջբերումն ըստ՝ Օրմանեան Մ., Ազգապատում, Սասն Բ, Կ.Պոլիս, 1914, էջ 2302, 2643:
28. Տե՛ս Missionary researches in Armenia, London,1834. p. 355,
Տե՛ս նաև՝ دکتر مر یم میراحمدی،دین و دولت در عصر صفوی:ص. ۱۰۴-۱۰۵
29. Տե՛ս Դանիելյան Լ.Գ., Շահ-Աբբաս Ա-ի կրոնական հանդուրժողական քաղաքականության հարցի շուրջը, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», Իրան, հ. IV, Ե.,1969, էջ 76:
30. "A Chronicle of the Carmelites", p.123.
31. Նույն տեղում, էջ 124:
32. Նույն տեղում, էջ 131-132:
33. Տե՛ս նույն տեղը, էջ 135, 143:
34. Տե՛ս "A Chronicle of the Carmelites", p. 152-153.
نصرالله فلسفی:زندگانی شاه عباس اول،جلد ۱-۲،تهران،۱۳۷۱،ص. ۵۶۹-۵۷۰-۵۷۳،۵۸۹
Տե՛ս նաև՝ Դավրիժեցի Ա., Պատմություն, Ե., 1988, էջ 61-62:
35. "A Chronicle of the Carmelites", p.153.
36. Նույն տեղում, էջ 164 -165:
37. Մեջբերումը՝ նույն տեղում, էջ 176:
38. Տե՛ս նույն տեղը, էջ 217:
39. Նույն տեղում, էջ 241, 245:
40. Տե՛ս նույն տեղը, էջ 258, 260, 262, 264:
41. Տե՛ս նույն տեղը, էջ 277:
42. Քաղվածքն ըստ՝ Գարեգին Բ. Կաթողիկոս, Հայաստանեաց եկեղեցին իր «ծառայական կերպ»-ին մէջ, Անթիլիաս, 1994, էջ 115, Տե՛ս նաև՝ Աստվածաշունչ, Ավետարան ըստ Մարկոսի, 16:15-74: